

բերի պիտի ըլլայ գտնել նիւթեր որոնք կենսական են մեր պատմութեան որոշ մարդերուն եւ շրջաններուն լուսարանութեան համար, եւ քնակաւորաբար նաեւ լուսարանութեան համար ԺԻ. դարու ազատագրական այս ցարդ անձանքի փորձին:

Սերմեն այսքանով ալ այս անգամ ստիպուած ենք գրանաւել:

Ուիլիքա

Յ. ԳԻՒՐՏԵԱՆ

- (1) Sir Anthony Sherley.- by E. Denison Ross.- London, 1933, էջ 13
 (2) A Chronicle of the Carmelites in Persia.- London, 1939, vol. I 175.
 (3) Sherley, - էջ 176. (4) Անդ, էջ 180. (5) 27.
 (6) Relecam, - Antonio Gouvea, - Lisbon, 1611, էջ 55 և եւն.
 (7) Three letters of Mar Jacob.- Gregorianum, Vol. XIV, 1933 էջ 71, G. Schurhammer.
 (8) Sherley, էջ 60. (9) Chronicle, - էջ 175.
 (10) Անդ, էջ 179.
 (11) Անդ, էջ 198.
 (12) Անդ, էջ 212.

« ԱՆԱՀԻՏ »-Ի ԸՆԹԵՐՈՂՆԵՐՈՒՆ

Անախիտի ներկայ թիւը հրապարակ կ'ելլէ առանց պարունակելու իր հիմնադրին Գրոնիկը, որ ցարդ այս հանդէսին բոլոր թիւերուն մէջ իր յատուկ տեղը կը գրաւէր: Այդ բացակայութեան պատճառը բնաւ այն չէ որ Գրոնիկի մը համար հարկ եղած նիւթերը պակասած են վերջերս, այլ՝ ճիշդ հակառակը՝ պատճառն այն է որ այդ կարգի նիւթերը բազմապատկուած եւ աւելի սուրցած են, ինչպէս համաշխարհային ընդհանուր քաղաքական եւ բարոյական կացութիւն, մեր ազգային հարցի արդի վիճակ, և. Հայաստանի եւ հաղութներու մէջ հայ ժողովուրդի պարզած հոգեկան պատկեր, Մարջայրենիքի եւ Սփիւռքի յարաբերութիւններ, արտասահմանի մէջ վերջերս հրատարակուած հայերէն գիրքեր, եւ հետզհետէ ստուարացող աղիւսներ շալքը այս վերջին տարիներու ընթացքին պայմանաւ հայ կարեւոր անձնաւորութեանց, որոնց մէջ կային ստալինական ուժեր, ինչպէս՝ վերջին անհետացողներէն՝ մեծարժէք գիտուն Երուսաղէ Մանուէլեանը, որ իմ ամենամարեկի եղբայրական բարեկամներէս մինն էր: Ներկայ թիւին մէջ կը շատանամ հրատարակելով Փաթթօրեան Հաստատութեան դերմտնորէն տօքթ. Տիւթաօրէ տը լա Ռիփիէօի դամ:

բանականը զոր այս վերջինը արտասանեց յուղարկաւորութեան օրը, Թերթիս յաշորդ թիւին վերապահելով Երուսաղէին եւ միւս անհետացողներուն վրայ՝ ինչպէս եւ վերեւ յիշատակուած բոլոր նիւթերուն մասին՝ իմ տեսութեանցս բանաձեւումը:

Անախիտի բաժանորդներէն շատեր դեռ չեն վճարած իրենց ոչ միայն ներկայ տարուան, այլ եւ ԺԲ. եւ ԺԳ. տարիներու (ոմանք նոյն իսկ նախապատերազմեան տարիներուն ալ) բաժնեգիրը: Ծնորհակալ կ'ըլլայի եթէ ատոնք հաճէին Անախիտի գործակալներուն յանձնել եւ կամ ուղղակի ինձի ղրկել իրենց անվճար մնացած բաժնեգիրները:

Անախիտի ներկայ տարուան երկրորդ թիւը լոյս պիտի տեսնէ սեպտեմբերի վերջերը. ան պիտի պարունակէ, Գրոնիկին հետ՝ որ անոր մեծագոյն մասը պիտի գրաւէ, իսկ մը աշխատակիցներու շահեկան գրուածքները:

Անախիտի տարեկան բաժանորդագիրն է, Ֆրանսայի, Սուրիոյ, Լիբանանի, Պարսկաստանի, Պնժիքի, Ջուրջերիոյ, Պալէստինայի երկիրներու համար՝ 500 ֆրանք. Հիւս. եւ Հար. Ամերիկայի, Եգիպտոսի, Անգլիոյ եւ այլ երկիրներու համար՝ 5 տոլար:

Ա. Զ.